

րը»: Նաև քաղաքէս 1/2 ժամ արեւմտահիւսիս Աֆխար-
քայ ճանապարհին վերայ կայ նոյնպէս «Քաֆը գոռ»:

Բերդիս արեւմտեան հարաւն, պարսպի մէջ կայ մի
ուխտատեղի Ս. Սարգիս անուամբ. անցած են դարեր
ուխտատեղի էր, իշխանութիւնը շինութիւններ շինած
են, ուխտագնացութիւնը դադարած է, 1835 թուական-
ներուն աւերակ դարձաւ, դարձեալ ուխտագնացութիւնը
շարունակուեցաւ, սակայն այն յիմար Փախին ևս այս
տեղ սկսած է զիբր տալ—ահ, ուհ, անելով շարունակ
ձայն հանել, պոռալ, զլուխը այս այն կողմ շարժել
փրփրալ, մարել. որով այս տեղ ևս ուխտագնացութիւնը
դադարած է:

Աստ աւանդութեան այս տեղ եղած է Սարգիս
անուն զօրաւար մի¹, բռնաւոր թագաւոր մի բերդը
պաշարած է, Սարգիս յանձնուած է բռնաւորին, որ
միջի ժողովուրդն ազատուի, սակայն թագաւորն խիստ
կը չարչարէ զՍարգիս, նստատեղին սուր երկաթեայ շիշ
մի մինչև թոքն կմտցնէ կը նահատակէ: Բերդի միջի
ժողովուրդը զայս տեսնելով կսկսին ուժով զիմադրել
և թշնամին վանել:

1. Աւանդութիւնս մասամբ իւրիք յարմար կգայ պատ-
մութեանս «Գեռ ևս խափեալ կային նախարարը հայոց, և ոչ
իմանային զգաւաճան միտսն Յուսփայ, վասն որոյ առեալ զօրսն՝
զիմեցին ի Աաղարշակերտ: Բնակիչք քաղաքին փակեալ ընդ-
դէմ նոցա զգրուես և ոչ ետուն նոցա թոյլ մտանել ի ներքս
և սկսան մարտ գնել ընդ դեմ նոցա: Եւ ի յօխորտալ թշնա-
մեացն արհամարեալ նոցա սպառնալիս նոցին կոտորեցին ի նո-
ցանէ զանհամար մարդիկ նետիւք և պարսաքարիւք և տապաստ
արկին զնոսա առ պարսպաւ, որով կարի իմն մեծապէս խայ-
տառակեալ Գաղկայ և նախարարացն, որք ընդ նմա դարձան
ամօթով յետս առ Յուսուփ»: